ԱԿՆԱՐԿ «ԿՈՒՄԱՅՐԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ* [1]

Արթուր Հովհաննիսյան

Բանալի բառեր՝ Կումայրի, արգելոց-թանգարան, պատմամշակութային, պատմա-ճարտարապետական, հուշարձան, Գյումրի, զբոսաշրջություն:

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի ստեղծումն ի սկզբանե ուղղված էր ինչպես Գյումրու բազմաշերտ պատմամշակութային ժառանգությունն իր միջավայրում անաղարտ պահպանելուն, այնպես էլ թանգարանային գործառույթներով և զբոսաշրջային սպասարկման նպատակներով օգտագործելուն: Քաղաքի պատմական կորիզը կազմող ժողովրդական ճարտարապետության նմուշների արժևորումը՝ որպես մշակութային ժառանգության օբյեկտներ և դրանց ներկայացումն արգելոց-թանգարանի կարգավիճակով ինքնին նորույթ էր հայ իրականության մեջ 1980-ական թթ. սկզբին: Դեռևս ՀԽՍՀ 7-րդ գումարման Գերագույն խորհրդի 5-րդ նստաշրջանում (1969 թ.) հուշարձանների պահպանության վերաբերյալ մի խումբ պատգամավորների կողմից արված առաջարկներում նկարիչ Մարտիրոս Սարյանը (1880-1972 թթ.) հին Խնձորեսկն իր նախնական տեսքով պահպանելու վերաբերյալ հարց բարձրացրեց, իսկ պատգամավոր Ռ. Եղոյանն առաջարկում էր վերականգնել Լենինականի մի շարք հուշարձաններ և օգտագործել նրանց «ծավալները որպես թանգարաններ, ցուցասրահներ, համերգասրահներ, որոնք իրենց մոտ կձգեն զբոսաշրջիկներին և հասարակական լայն խավերին»[2]: Խնդիրը նրանում էր, որ մինչև 1970-ական թթ. պահպանության և թանգարանային օգտագործման ենթակա հուշարձանները հիմնականում առանձին հնագիտական, պաշտամունքային և ճարտարապետական կառույցներ էին: Հարություն Մարությանն իր հոդվածներից մեկում նշում է, որ մինչև 1970-ական թթ. վերջը քաղաքային կամ գյուղական բնակելի տների, հասարակական կառույցների ամրակայման, վերականգնման կամ վերակառուցման գործունեություն չիրականացվեց և որ միայն հետո սկսվեց ընկալվել դրանց գեղարվեստական–ճարտարապետական, ապա նաև ազգագրական ու պատմաքաղաքաշինական արժեքը[3]: Այս առումով արդեն 1970-ական թթ. սկզբներից սկսվեցին կարևորվել բնակավայրերի ամբողջական պատմաքաղաքաշինական հատվածները և դրանց հիմքը կազմող ժողովրդական ճարտարապետության կառույցները: Նման հատուկ պահպանման օրինակներ էին համարվում այնպիսի հին բնակավայրեր, ինչպիսիք են Գորիսը, Շինուհայրը, հին Խնձորեսկը, Վաղարշապատը, Լենինականը կամ նրանց առանձին հատվածները[4]: Նման իրավիճակում մեզանում գործնականում սկսվեց պաշտոնապես կիրառվել «արգելոց-թանգարան» հասկացությունը՝ ի դեմ 1980 թ. ստեղծված «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի[5]: Կառավարության համապատասխան որոշման մեջ նշվում էր, որ «Լենինականի քաղաքաշինական-ճարտարապետական կարևոր արժեք ներկայացնող Կումայրի-Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինական պատմական միջուկի պահպանումն ապահովելու նպատակից ելնելով՝ «Հայկական ՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման օրենքից», Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում է ընդունել Հայաստանի կոմկուսի Լենինականի քաղաքային կոմիտեի, ժողովրդական դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի և Հայկական ՍՍՀ պետշինի

* Հոդվածն ընդունվել է 03.04.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել մ.գ.թ., դոցենտ Դ. Պողոսյանը: 12.04.20:

համատեղ առաջարկությունը և Լենինական քաղաքի պատմական միջուկը հայտարարել ժողովրդական դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործկոմի «-Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարան[6]»: Վերջինս ի սկզբանե հիմնվեց առավելապես իր գործառույթներով օգտագործվող ժառանգության ամբողջական արժևորման, «որոշակի ժամանակաշրջանին հատուկ քաղաքաշինական միջավայրի պահպանման», դրան «անհարիր տարրերի ներթափանցման կասեցման», սերունդների միջև «նյութեղեն-հոգևոր կամրջի» ստեղծման նպատակով[7]: Որոշմանը կից կանոնադրության մեջ արգելոց-թանգարանի հիմնական խնդիրներն էին.

ա) Կումայրի-Գյումրի-Ալեքսանդրապոլ-Լենինական պատմական ժամանակաշրջանի քաղաքաշինական ավարտուն համալիրի պահպանումը և դրա վերականգնման ու վերակառուցման աշխատանքների կարգավորումն ու կատարումը.

բ) «Կումայրի» արգելոց-թանգարանի բոլոր հուշարձանների հատուկ հաշվառումը, դրանց պահպանումը և օգտագործումը.

գ) գոյություն ունեցող ճարտարապետական-քաղաքաշինական ավանդների ու կոլորիտի պահպանումը, պատմաճարտարապետական արժեք չունեցող և միջավայրի հետ չներդաշնակվող շենքերի հետզհետե պլանային վերացման, ինչպես նաև «Կումայրի» արգելոց-թանգարանի տարածքից դրան ոչ բնորոշ արդյունաբերական ձեռնարկությունների, այլ կառույցների տեղափոխման ու տրանսպորտային երթևեկության ակտիվության պակասեցման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

դ) քաղաքաշինական հնարավորությունները լավագույն ձևով ցուցադրելու վերաբերյալ միջոցառումների իրականացումը, «Կումայրի» արգելոց-թանգարանում և դրա շուրջը հայտնաբերված հնագիտական, ազգագրական և պատմության ու կուլտուրայի արժեքավոր հուշարձանների հաշվառումը, պահպանումը և ձեռքբերումը,

ե) «Կումայրի» արգելոց-թանգարանի տարածքում բոլոր տեսակի շինարարական աշխատանքների ճարտարապետական հատակագծման առաջադրանքների կատարման ապահովումը և շինարարական ու վերանորոգման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը.

զ) «Կումայրի» արգելոց-թանգարանի տարածքում գտնվող հուշարձանները շրջապատող տարածությունների, պատմականորեն ձևավորված քաղաքային կառուցապատումների, այգեպուրակային և բնական լանդշաֆտի պահպանման, օգտագործման և կատարելագործման միջոցառումների իրականացումը,

է) թանգարանային գործի, հուշարձանների գիտական ցուցադրման, ռեկլամային-գեղարվեստական, զբոսաշրջիկների սպասարկման, հուշանվերների պատրաստման ու իրացման հետ կապված աշխատանքների կատարումը[8]:

Այս դեպքում հուշարձանների թանգարանացումը ենթադրում էր ոչ միայն քաղաքի հարուստ և բազմաշերտ մշակութային ժառանգությունը պահպանել, այլ այն օգտագործել իր տեղում ու գործառույթներով: Ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը նշում էր, որ «հայտարարվելով արգելոց-թանգարան՝ պատմաքաղաքաշինական այս համալիրը չի դադարելու ամենօրյա եռուն կյանքով ապրող քաղաք լինելուց»[9]: Հետագայում արգելոց-թանգարանը մտավ Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության կազմի մեջ: 1990–ական թթ. սկզբին «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանն իր՝ 220 հա պահպանության ենթակայության տարածքում ուներ հաշվառված 1672 հուշարձան (1227-ը՝ բնակելի տուն, որոնցից 1072-ը պահպանվում էին մասնավոր սեփականության իրավունքով)[10]: Վերջինս հետևյալ կառուցվածքն ուներ՝ Վարչակառավարչական անձնակազմ, Գիտա-ֆոնդային աշխատանքների բաժին, Պատմաճարտարապետական և պատմահնագիտական հուշարձանների ուսումնասիրման բաժին, Ազգագրական և բանահյուսական ուսումնասիրությունների բաժին, Ասլամազյան քույրերի

պատկերասրահ, Տնտեսական մաս, արտաբյուջետային մասով՝ Պատմաճարտարապետական և պատմահնագիտական հուշարձանների պահպանության և շահագործման բաժին[11]: Սույն արգելոց-թանգարանը փաստորեն մեկ տարածքի շարժական, անշարժ, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության համալիր պահպանության թանգարանային արդյունավետ եղանակ էր: Արգելոց-թանգարանի՝ 1990թ. աշվետվության մեջ քաղաքաշինական, ճարտարապետական, հնագիտական հուշարձան-կառույցների պահպանությանից զատ, նշվում էին նաև քաղաքային կենցաղին, տվորություններին, ծեսերին, արհեստներին, տոներին վերաբերող նյութերի հավաքման և ձայնագրման աշխատանքներ[12]: Նմանատիպ բացօթյա թանգարանի մոդելը ներառում էր մշակութային լանդշաֆտի և էկոթանգարանի հայեցակարգային հիմնական բաղադրատարրերը, որոնք այսօր էլ արդիական են և, ցավոք, երկրաշարժի ու կառուցվածքային վերափոխումների պատճառով հետագայում զարգացում չունեցան[13]:

ՀՀ կառավարության 1994 թ. որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հուշարձանների պահպանության վարչության հաշվեկշռից «-Կումայրի» պետական պատմամշակութային արգելոց-թանգարանը և հուշարձանների վերականգնման «Շիրակ» արվեստանոցն իր հիմնական միջոցներով ու կառույցներով հանձնվեցին Գյումրու քաղխորհրդի գործկոմի հաշվեկշռին[14]: Արիս Ղազինյանը[15] հետևյալ հետաքրքիր դիտարկումն էր կատարում. «Կումայրի» ճարտարապետական և «Կիժի» պետական պատմաճարտարապետական և ազգագրական արգելոց-թանգարանները խորհրդային տարիներին միաժամանակ ստացան արգելոց-թանգարանի կարգավիճակ: Սակայն հետխորհրդային շրջանում առաջինն աստիճանաբար վերածվեց քարացած կամ ապօրինի վերափոխվող, վթարային, անորոշ պետական կարգավիճակով պահպանվող քաղաքաշինական հատվածի, իսկ վերջինս դարձավ ՌԴ Կարելիա մարզի զբոսաշրջային զարգացման գլխավոր ռեսուրսներից մեկը»: Այս առումով Գյումրու քաղաքապետարանի ենթակայության ներքո հայտնված «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանը վերածվել էր ենթաբաժնի՝ քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի կազմում և նույնիսկ առանձին գոյություն չուներ:

2008 թվականին ՀՀ կառավարության՝ հուլիսի 12-ի Գյումրու պատմամշակութային և քաղաքաշինական միջավայրի վերականգնման և զարգացմանը վերաբերող որոշման մեջ հատուկ անդրադարձ էր կատարվում «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի իրավական կարգավիճակի վերականգնմանը, որով առաջարկվում էր «փոփոխել Գյումրի քաղաքի «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի իրավական կարգավիճակը՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կամ Գյումրու քաղաքապետարանի համակարգում, կամ մարզպետարանի ենթակայությամբ պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպմամբ»[16]: Այս որոշման մեջ խնդիր էր դրվում «Քաղաքների պատմական կենտրոնների ռեաբիլիտացիայի» եղանակով երկրաշարժից հետո արգելոց-թանգարանի տարածքում առկա վնասված հուշարձան-կառույցների 90 տոկոսի ամրակայման, «կառուցապատման ու ճարտարապետական փոքր ձևերի վերականգնման, տարածքների բարեկարգման ու կանաչապատման, գոյություն ունեցող ոճին հարիր որոշ հատվածների կառուցապատման լրացման», որով ոչ միայն կպահպանվեր պատմական կենտրոնը, ստեղծելով գրավիչ և բարեկարգ միջավայր, այլև կնպաստեր «փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի զարգացման, գիտության և արվեստի, ավանդական արհեստագործության վերականգնմանը և ներդրումների համար բարենպաստ պայմանների, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանն ու մարդկանց բարեկեցության բարձրացմանը»[17]: Սակայն, այս որոշմամբ մշակված գերակա ուղղությունները հետագայում էլ շարունակեցին մնալ արդիական: Գյումրի քաղաքի ավագանու՝ 2013 թ. հուլիսի 29-ին 78-Ա որոշմամբ վերականգնվեց նախկին պատմաճար-

տարապետական արգելոց-թանգարանի իրավական կարգավիճակը՝ որպես «համայնքային ոչ առևտրային կազմակերպություն»[18]: Սակայն այն ստացավ «Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան» անվանումը, որը կապված էր նաև 2012 թ. դեկտեմբերի 5-ին Աշխաբադում ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստում Գյումրին 2013 թվականի ԱՊՀ պետությունների մշակութային մայրաքաղաք հռչակելու հետ: Նոր կանոնադրությամբ արգելոց-թանգարանը երկրում գործող համանման պետական ոչ առևտրային կազմակերպությունների նմանությամբ դարձավ «շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և գիտալուսավորչական, գիտատեղեկատվական, մշակութային գործունեություն իրականացնող կազմակերպություն»: «Գյումրի քաղաքի վարչական տարածքում գտնվող պատմական, ճարտարապետական, հնագիտական կամ այլ մշակութային արժեք ներկայացնող անշարժ հուշարձանների, հուշարձան-համալիրների ուսումնասիրման, հանրահռչակման և օգտագործման, ինչպես նաև համայնքային սեփականություն համարվող պատմամշակութային անշարժ հուշարձանների, հուշարձան համալիրների, բնապատմական, պատմական միջավայրի, պատմամշակութային հողերի և դրան հարող տեղանքապատկերների (լանդշաֆտի) ամբողջական պահպանումն իրականացնելու նպատակով» [19]:

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի արդի հիմնական խնդիրների լուծումները մեծապես կապված են ֆինանսական միջոցների պակասի հետ: Նման խնդիրներից կարելի է առանձնացնել հետևյալները.

ա) արգելոց-թանգարանի տարածքում հուշարձանների ամրակայման և վերականգնման աշխատանքների իրականացումը,

բ) հուշարձանների տեսքը խաթարող հեռահաղորդակցական համակարգի կարգավորումը,

գ) համայնք-արգելոց-թանգարան համագործակցության բացակայությունը,

դ) աշխատանքային հաստիքների պակասը և այլն:

Վերլուծելով արգելոց-թանգարանի շուրջ առաջացած արդի վիճակը՝ ակնհայտ է, որ վերջին տարիներին, Ռուսթավելի փողոցի հուշարձան կառույցների շրջակայքի բարելավման և դրանց վերանորոգման աշխատանքները նոր ազդակ հաղորդեցին քաղաքի նկատմամբ զբոսաշրջային հետաքրքրությանը. դեպի «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան այցելություններն ավելացան:

Արգելոցի տարածքում գտնվող հուշարձանների կեսից ավելին մասնավոր սեփականություններ են, այդ իսկ պատճառով կարևոր են հուշարձանների սեփականատեր հանդիսացող անձանց հետ տարվող աշխատանքները, որպեսզի հետագայում հուշարձանների տեսքը խաթարող անհարկի միջամտություններ տեղի չունենան հենց սեփականատերերի կողմից, և, նաև, իրազեկման միջոցով հնարավորություն ստեղծվի հուշարձանների պահպանության հարցը կիսել համայնքաբնակների հետ: «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանում առկա խնդիրները առնչվում են նաև արգելոցի ցանկում ներառված հուշարձանների մասին արխիվային տվյալների բացակայության հետ: Հուշարձանները արգելոց-թանգարանի ցուցադրություններում ներկայացնելու համար անհրաժեշտ է իմանալ հուշարձանի հետ կապված կարևոր տվյալները, օրինակ՝ բնակարանատիրոջը, կառուցողին, կառուցման տարեթվերը, զարդաքանդակներում առկա խորհրդանիշների նշանակությունը, բնակարանատիրոջ ունեցած դիրքը և այլն: Հաջորդիվ տեղեկատվական վահանակների և հասարակական զուգարանների տեղադրման անհրաժեշտությունն է արգելոցի հարակից տարածքում: Հուշարձանների մասին պատմող տեղեկությունների առավել հետաքրքրական հատվածները անհրաժեշտ է եռալեզու տեքստերով ներկայացնել այցելուներին:

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի հուշարձաններից շատերն այսօր բացի մասնավոր սեփականություն լինելուց դարձել են խանութներ, դե-

ղատներ, պատկերասրահներ, թատրոն և այլն: Սա թանգարանացման դասական տարբերակից անցումն է նորարարական օգտագործման եղանակների: Այդպիսով քաղաքը՝ որպես կենդանի օրգանիզմ, չի քարանում ժամանակի մեջ, այլ այն ժամանակի փոփոխության կամուրջ է հանդիսանում՝ հնարավորություն տալով ապրել պատմական միջավայրում ժամանակակից կյանքի պահանջմունքներին համապատասխան: Նմանատիպ թանգարանացման մոդելը լայնորեն կիրառվում է Եվրոպայի մի շարք երկրներում, և սա մեխանիզմ է, որի օգնությամբ արգելոցը գործում է նաև համայնքի շնորհիվ և չի վերածվում սոսկ «հուշանվերներ վաճառող տաղավարների»: Այս դեպքում սակայն պետք է լինի համապատասխան տեղեկատվության տրամադրում այցելուին, թե նույն հուշարձանը, որը այսօր գործում է որպես դեղատուն, ինչ է եղել նախկինում, և հուշարձանի մասին պատմող այլ տեղեկություններ ներկայացնի:

Կարծում ենք, որ արգելոց-թանգարանում այցելուների թվի աճը խթանելու համար նաև պետք է ընդլայնվեն զբոսաշրջային կազմակերպությունների հետ տարվող աշխատանքները, ներգրավվեն նորերը, և ընդլայնվի համագործակցության շրջանակը: Զբոսաշրջային կազմակերպությունների կազմակերպած երթուղիները շատ հաճախ կրկնվում են և Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի հետ քիչ են առնչվում: Նրանց ուղղությունները հիմնականում արգելոց-թանգարանի տարածքում գործող այլ թանգարաններն են: Կարծում ենք, որ ճիշտ կլիներ, եթե «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանը ևս մշակեր և առաջարկեր հատուկ տուրեր, որոնք կբացահայտեին արգելոց-թանգարանը, ինչպես նաև թույլ կտային նոր միջոցներ և ներդրումներ ներգրավել առկա խնդիրների լուծման համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շնորհակալություն ենք հայտնում «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն Ստեփան Տեր-Մարգարյանին մեր հետազոտությանն աջակցելու համար: Ս. Տեր-Մարգարյանի հետ հարցազրույցն անցկացվել է 14.07.2018թ.:
2. Պողոսյան Դ., ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների կազմակերպման գործընթացը և սկզբունքները, Երևան, 2018, էջ 56:
3. Марутян А., Из истории сохранения и застройки исторического центра Еревана //XIX-начало XXI века//, Историко-культурное наследия. Сб. науч.-инф. статей, выпуск 1, Ереван, 2014, стр. 75-76.
4. Հարությունյան Վ., Նալբանդյան Գ., Գրիգորյան Ա., Աբրահամյան Կ., Իսրայելյան Վ., Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը, Երրևան, 2005, էջ 167:
5. Պողոսյան Դ., ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների կազմակերպման գործընթացը և սկզբունքները, Երևան, 2018, էջ 71:
6. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1980 թ. օգոստոսի 5-ի № 463 որոշումը Լենինական քաղաքում «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարան ստեղծելու մասին, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշումներ և կարգադրություններ, 1980, օգոստոս, էջ 19:
7. Միրիջանյան Ա., «Կումայրի» արգելոցի քաղաքաշինական խնդիրները, Գիտություն և տեխնիկա, № 4, 1983, էջ, 15-20:
8. Կանոնադրություն ժողովրդական դեպուտատների Լենինականի քաղսովետի գործկոմի «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի՝ հաստատված ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1980 թ. օգոստոսի

5-ի № 463 որոշմամբ, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշումներ և կարգադրություններ, օգոստոս, 1980, էջ 25-26:
9. Հարությունյան Կ. Մ., Հայրենի կոթողների նոր ճակատագիրը, Երևան, 1982, էջ 41:
10. ՀԱԱ, ֆ. 1063, g. 2. , գ. 411, թ. 1:
11. ՀԱԱ, ֆ. 1063, g. 2. , գ. 252, թ. 2-4:
12. ՀԱԱ, ֆ. 1063, g. 2. , գ. 253, թ. 7:
13. Պողոսյան Դ., ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների կազմակերպման գործընթացը և սկզբունքները, Երևան, 2018, էջ 84:
14. Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թ. ապրիլի 21-ի N 190 որոշումը «Գյումրի քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունը, վերականգնումը և օգտագործումը բարելավելու միջոցառումների մասին», «ԻՐՏԵԿ» իրավական տեղեկատվական կենտրոնի պաշտոնական ցանցակայք, օգտ. ամսթ. 23.09. 2017, http://www.irtek.am/views/act.aspx?aid=1803 (մատչվել է ամիս ամսաթիվ թիվ) :
15. *Ղազինյան Ա.*, Ալեքսանդրապոլ. կորսված քաղաք կամ լեգենդ մաքսատան մասին, Ազգային գաղափար, 2008 մայիս, № 2, https://clck.ru/MhVGz (մատչված է)
16. ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի N 642-Ա որոշման Գյումրի քաղաքի պատմամշակութային և քաղաքաշինական միջավայրի վերականգնման և զարգացման (Կումայրի) ծրագրի գերակա ուղղությունները, «Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ» ARLIS» պաշտոնական ցանցակայք, օգտ. ամսթ. 30. 08. 2018 թ. , *http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=45159*
17. ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի N 642-Ա որոշման Գյումրի քաղաքի պատմամշակութային և քաղաքաշինական միջավայրի վերականգնման և զարգացման (Կումայրի) ծրագրի գերակա ուղղությունները, «Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ» ARLIS» պաշտոնական ցանցակայք, օգտ. Ամսթ. 30. 08. 2018 թ., *http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=45159*
18. Գյումրու ավագանու 2013 թ. հուլիսի 29-ի 78-Ա որոշման «Կանոնադրություն Գյումրու քաղաքապետարանի ««Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական ցանցակայք, օգտ. ամսաթիվ 24. 08. 2018 թ:
19. Գյումրու ավագանու 2013 թ. հուլիսի 29-ին 78-Ա որոշման «Կանոնադրություն Գյումրու քաղաքապետարանի ««Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Գյումրու քաղաքապետարանի պաշտոնական ցանցակայք, օգտ. ամսաթիվ 24. 08. 2018 թ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ակնարկ «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի ստեղծման ընթացքի և արդի խնդիրների շուրջ

Արթուր Հովհաննիսյան

Սույն հոդվածով անդրադառնում ենք «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի ստեղծման պատմությանը, խնդիրներին և ներկայացնում ենք այդ խնդիրների լուծմանն ուղղված մեխանիզմները: «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի ստեղծումն ի սկզբանե ուղղված է եղել ինչպես Գյումրու բազմաշերտ

պատմամշակութային ժառանգությունն իր միջավայրում անաղարտ պահպանելուն, այնպես էլ թանգարանային գործառույթներով և զբոսաշրջային սպասարկման նպատակներով օգտագործելուն: «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի հուշարձաններից շատերն այսօր բացի մասնավոր սեփականություն լինելուց դարձել են խանութներ, դեղատներ, պատկերասրահներ, թատրոն և այլն: Սա թանգարանացման դասական տարբերակից անցումն է նորարական օգտագործման եղանակների:

РЕЗЮМЕ

Очерк о процессе создания и актуальных проблемах историко-культурного музея-заповедника "Кумайри"

Артур Ованнисян

Ключевые слова: Кумайри, музей-заповедник, историко-культурный, историко-архитектурный, памятник, Гюмри, туризм.

В данной статье мы рассматриваем историю и проблемы создания Кумайрийского историко-культурного музея-заповедника и предлагаем механизмы решения этих проблем. Историко-культурный музей-заповедник Кумайри изначально был предназначен для сохранения многослойного исторического и культурного наследия Гюмри и его окрестностей, а также для реализации его музейных функций и туристических услуг. Многие из памятников Кумайрийского историко-культурного музея-музея сегодня стали магазинами, аптеками, галереями, театрами и т.п., помимо того, что находятся в частной собственности. Это - переход от классической версии музеефикации к инновационному использованию.

SUMMARY

Essay on the Process of Creation and Current Problems of the Kumayri Historical and Cultural Museum-Reserve

Artur Hovhannisyan

Keywords: Kumayri, museum-reserve, historical-cultural, historical-architectural, monument, Gyumri, tourism.

The article examines the history and problems of the Kumayri Historical and Cultural Museum-Reserve establishment and presents mechanisms for solving these problems. The Kumayri Historical and Cultural Museum-Reserve was originally intended to preserve the multilayered historical and cultural heritage of Gyumri in its vicinity, as well as to use its museum functions and tourist services. Many of the monuments of the Kumayri Historical and Cultural Museum-Museum today have become shops, pharmacies, galleries, theaters and so on, besides being privately owned. This is a transition from the classic version of museification to the innovative use of the latter.